

ԳԵՐՀԱՐԴ ՀՈԼՈՒՄ

Շտուսագարտ երկրամասի Գերագույն դատարանի պաշտոնաթող դատավոր, Ալբերտ Լյուդվիգ Ֆրայբուրգի անվան համալսարանի օտարերկրյա և միջազգային մասնավոր իրավունքի ինստիտուտի տնօրեն, դոկտոր, պրոֆեսոր

**ԻՐԱՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՉԱՐԳԱՅՈՒՄ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ
(ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԱՐԳԱՅՈՒՄԸ՝
ՈՐՊԵՍ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԽՆԴԻՐ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ)**

I. Թեմատիկան

1. Դատավորի գործունեությունը (բոլոր դատարաններում և իրավունքի բոլոր ճյուղերում՝ քաղաքացիականում, քրեականում, վարչականում ևս) բնութագրվում է երկու բևեռներով, որոնց միջև լարվածություն կա կամ կարող է լինել: Մի կողմից դատավորի գործունեությունը բնորոշվում է անկախության հատկանիշով (առարկայական անկախություն, անձնական անկախություն): Այն երկրներում, որտեղ կան սահմանադրություններ, այս անկախությունն ամրագրված է այդ սահմանադրություններում, ինչպես, օրինակ, Գերմանիայի Հիմնական օրենքի 97-րդ հոդվածում: Այդ անկախությունը Հայաստանի դեպքում երաշխավորված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ և դրան հաջորդող հոդվածներում: Հոդված 94-ը սահմանում է. «Դատարանների անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով»: Դատական պրակտիկան օժտված է դատավորների անկախության երաշխիքով, դատավորի այս անկախությունը կարելի է բաժանել հետևյալ տարրերի՝ առարկայական անկախություն, պատասխանատվության չենթարկվել և անձնական անկախություն. մյուս կողմից դատավորի ցանկացած գործողություն պետք է օբյեկտիվ բնույթ ունենա: Այստեղ առարկայական անկախության դիմաց գործ ունենք դատավորի՝ օրենքով կամ, ինչպես դա ձևակերպված է Գերմանիայի Հիմնական օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասում, «օրենքով և իրավունքով» կաշկանդված լինելու հետ: Դրանից շատ չի տարբերվում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ հոդ-

վածի 1-ին պարբերության ձևակերպումը՝ «Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան»: Սահմանադրության 94-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում էլ ասված է. «Դատարանների լիազորությունները, կազմավորման ու գործունեության կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով»: Այս հիմնական նորմերին հանդիպում ենք նաև Հայաստանի դատական օրենսգրքի հոդվ. 1-ում և 8-ում, ինչպես նաև 11-րդ հոդվածի առաջին մասում, որոնց բովանդակությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հիշատակված նորմերին կամ լրացնում է դրանց:

2. Դատավորներն իրենց գործունեությունը ծավալում են դատարաններում, որոնք պարտավոր են որոշումներ կայացնել կյանքի կոնկրետ իրավիճակների վերաբերյալ: Դատարանները չպետք է վերացական թեզեր սահմանեն. դա ավելի շուտ իրավագիտության գործն է՝ իրավունքը զարգացնելու և օրենքները մեկնաբանելու խնդիրների շրջանակում: Քանի որ արդարության ու իրավական անվտանգության պահանջներից ելնելով՝ դատարանները կոնկրետ գործի փաստական հանգամանքներին պարտավոր են մոտենալ ու դրանց վերաբերյալ որոշումներ կայացնել համաչափորեն և որոշումների կանխատեսելիության երաշխիքի կատարմամբ, յուրաքանչյուր իրավական պետությունում պետք է երաշխավորված լինի նաև «հավասարությունն օրենքի ու դատարանի առջև»: Հայաստանի դեպքում այդ հավասարությունն օրենքի ու

www.lawinstitute.am

դատարանի առջև իր արտահայտությունն է գտել դատական օրենսգրքի 15-րդ հոդվածում: 1-ին մասում պարզ և ճիշտ ասված է. «Բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև»: 2-րդ մասն արգելում է խտրականությունը, 3-րդ մասում իր արտահայտությունն է գտնում այն հանգամանքը, որ իրավունքը դրսևորվում է դատարանների որոշումներում և իրավաբանների հայացքներում ու գրքերում, 4-րդ մասը նպատակ ունի, հաշվի առնելով իրավական նորմերի բազմաթիվ հնարավոր մեկնաբանությունները, ապահովել հավասարությունն օրենքի առջև ու իրավական անվտանգությունը՝ դրա համար առանձնացնելով վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները: Այստեղ ու այսօր մենք խոսում ենք բարձր ատյանների դատարանների որոշումների պարտադիր ներգործության միջոցով իրավական անվտանգությունն ապահովելու այս գործառույթի մասին. որոշումներ, որոնց նշանակությունը դուրս է գալիս կոնկրետ գործի շրջանակից: Այդ պատճառով Ձեր ուշադրությունը հրավիրում ենք այդ նորմի և դրա հետևում գտնվող սահմանադրական նորմի (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հոդվ. 2, առաջին նախադասություն) ձևակերպումների վրա.

Դատական օրենսգրքի հոդվ. 15 մաս 4.

Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ՝ բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հոդվ. 92, մաս 2.

Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով:

3. Երբ խոսքը անկախ դատական պրակ-

տիկայի և իրավունքով ու օրենքով կաշկանդված լինելու մասին է, յուրաքանչյուր դատարանի համար առաջին պլանում է գտնվում այն կոնկրետ գործը, որն ինքը պիտի քննի: Միաժամանակ անհրաժեշտ է իրավունքի համաչափ և վստահ կիրառում, սրանք բոլորը արդարության պահանջներ են, որոնք, անգամ եթե պոզիտիվ իրավունքի առումով ամրագրված չլինեին պետությունների սահմանադրություններում և միջազգային համաձայնագրերում, ինչպես օրինակ, Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայում, պետք է համարվեին չգրված, սակայն յուրաքանչյուր դատական իշխանության համար ղեկավար սկզբունքներ: Անշուշտ, կարևոր նշանակություն ունի այն, թե արդարության, հիշատակված կաշկանդվածության, բայց նաև դատավորների անկախության շահերից ելնելով ինչպես է դրսևորվում կաշկանդվածությունը ոչ միայն գրված օրենքով, այլև գոյություն ունեցող իրավական պրակտիկայով: Այլ կերպ ասած՝ ինչպես է համատեղվում «դատական պրակտիկայի միասնականության ապահովում» «դատավորների անկախության» հետ. չէ՞ որ դատավորների անկախությունը ոչ միայն չեզոքության և անկողմնապահության երաշխիք է, այլև այն երաշխավորում է գրված իրավունքի բովանդակության կրկնակի և անհրաժեշտության դեպքում նոր մեկնաբանումը՝ ելնելով կենդանի հասարակական իրականությանը և դրա փոփոխություններին համապատասխանող իրավական պրակտիկայի շահերից: Ես այստեղ պիտի խոսեմ այդ մշտապես հրատապ ու կարևոր հարցի մասին իբրև հյուր արտասահմանից, եվրոպացի՝ գերմանացի դատավոր ու միջազգային իրավունքին քաջատեղյակ իրավագետ: Այդ նպատակով ես սկզբում կփորձեմ լուսաբանել այդ հարցի վերաբերյալ տեսակետները իմ հայրենի պետությունում՝ Գերմանիայում, և ապա նաև դրա սահմաններից դուրս՝ Եվրոպական Միությունում: Բնականաբար ստիպված եմ որոշ սահմանափակումներ անել, Ես չեմ կարող ներկայացնել բոլոր 27 անդամ պետությունների իրավակարգերը, այլ կանդրադառնամ այն կարգավորումներին, որոնք կարևոր նշանակություն ունեն Հայաստանում կատարվող քննարկումների համար: Այսինքն, ես գիտակցում եմ իմ կողմից ներկայացվող տեղեկատվության թերի լիները՝ թեմայի լայն ընդգրկման պատճառով: Այնուամենայնիվ թեմայի կարևորությունն ակնհայտ է:

Այստեղ Հայաստանում այն վաղուց է քննարկվում: Հինգ տարի առաջ ես առաջին անգամ եմ զեկուցմամբ մասնակցել այդ քննարկումներին, հիմա՝ հինգ տարի անց, այն զեկուցման որոշ դրույթներ դեռևս պահպանել են իրենց հրատապությունը:

II Նախադեպերով կաշկանդվածության կարգավորումը Եվրոպական Միության իրավական համակարգերում

1. Մայրցամաքային իրավակարգերը, կրելով կողիֆիկացիաների ու առանձին օրենքների դրոշմը, ելնում են դատարանի՝ օրենքով կաշկանդված լինելուց: Եթե թույլ տաք սկսել Գերմանիայից, ապա կասեմ, որ դատավորը որոշումներ կայացնելիս կաշկանդված է «օրենքով», ինչի տակ պետք է հասկանալ ցանկացած իրավական նորմ, այսինքն՝ ոչ միայն օրենքները ձևական առումով, այլև գործադիր իշխանության կարգադրությունները, պարտադիր կանոններ սահմանելու իրավունք ունեցող մարմինների կանոնադրությունները և չգրված սովորույթային իրավունքը, երբ այն (դեռ) գործում է պոզիտիվ իրավունքի առումով իրավական կարգավորումների բացակայության պատճառով: Այս կաշկանդվածությունը գոյություն ունի դատավորի համար նրա կողմից արդարադատության իրականացման ողջ գործընթացի ժամանակ: Այդ կաշկանդվածությունն իր արտահայտությունն է գտել Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքի և քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդվածներում՝ քաղաքացիաիրավական ոլորտում (Քաղաքացիական դատավարության օրենսգրքի ներմուծման մասին օրենքի §12, քաղաքացիական օրենսգրքի ներմուծման մասին օրենքի հոդվ. 2 EGBGB), Քրեական դատավարության օրենսգրքի §7-ում՝ քրեաիրավական ոլորտում և ուրիշ նորմերում՝ մեր արդարադատության մյուս ճյուղերի համար: Այդ կաշկանդվածությունը նշանակում է, որ գերմանացի դատավորը պարտավոր է կիրառել օրենքը, եթե չի կարող այն անվավեր համարել օրենքն ստուգելու և կիրառումը մերժելու՝ իրեն իբրև դատավորի տրված իրավասության ուժով: Նա պարտավոր է դա անել նաև այն դեպքում, երբ կիրառման արդյունքում ընդունվող որոշումն անարդար է համարում: Նա արդարադատություն է իրականացնում, իսկ իրավական անվտանգությունն ավելի կարևոր է, քան կոնկրետ գործով արդարության վերաբերյալ նրա պատկերացումը:

2. Մեկ այլ լարվածություն է առաջանում

այս դաշտում այն առնչությամբ, որ դատավորը պարտավոր է ենթարկվել դատարանների որոշումներին, ընդ որում այդպիսիք կարող են լինել ինչպես իր սեփական որոշումները, այնպես էլ (և սա ավելի կարևոր է իրավունքի կիրառման պրակտիկայում) դատական համակարգի ավելի բարձր ատյանի և առանձնապես որևէ իրավակարգի գերագույն դատարանի որոշումները: Հանդգնություն և սխալ կլիներ մայրցամաքային Եվրոպայի պետությունների առնչությամբ «նախադեպային որոշումներով կաշկանդվածությունը» ժխտելը: Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում և այլուր գոյություն ունի այդ կաշկանդվածությունը, գերագույն դատարանների որոշումները համոզիչ են, ինչի շնորհիվ հենց հնարավոր է օրենքների վերացական-ընդհանուր կանոններն օգտագործել առանց խախտելու իրավական անվտանգությունը կամ իրավունքի զարգացումը տանել որոշակի ուղղությամբ, որի վերաբերյալ օրենսդիրը դեռևս որոշում չի կայացրել:

3. Քանի որ մայրցամաքային իրավունքը տարբեր երկրներում իր ելակետի և պրակտիկայի տեսանկյունից գերծ է էական տարբերություններից, ես սկզբում օրինակ կբերեմ Գերմանիայից: Գերմանական դատական պրակտիկայի կաշկանդվածության օրենքով սահմանված ելակետը Հիմնական օրենքի 97-րդ հոդվածում կարգավորված կաշկանդվածությունն է օրենքով և իրավունքով. այս կարգավորումը կա նաև գերմանական արդարադատության տարբեր ճյուղերի դատավարական օրենսգրքերում: Այնուամենայնիվ, գերմանական իրավունքում չկա կաշկանդվածության վերաբերյալ այնքան լայն կարգավորում, ինչպես Հայաստանի դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում: Գերմանական իրավունքը, ինչպես և Գերմանիայի հարևան պետությունների իրավունքները գիտակցաբար հրաժարվել են այդքան հեռուն գնացող կարգավորումից:

ա) Գերմանական իրավունքում դատավորն **օրենքով** շատ ավելի նեղ շրջանակում է կախված դատարանների որոշումներից: Ոչ միայն կոնկրետ գործի համար պարտադիր են օրենքի ուժով օժտված **Դաշնային Սահմանադրական դատարանի որոշումները** (Դաշնային Սահմանադրական դատարանի մասին օրենքի §31) և, բացի դրանից, այն որոշումները, որոնք ըստ Դաշնային Սահմանադրական դատարանի մասին օրենքի §31-ի պարտադիր ներգործություն են ծավալում

կոնկրետ գործից դուրս: Այդ պարտադիր ներգործությունը կա այնտեղ, որտեղ այն թելադրվում է օրենքով: Այն կա նաև այն դեպքերում, երբ օրենքը պահանջում է, որ գործը տարբեր ատյաններում քննելու դեպքում ստորադաս դատարանները ենթարկվեն իրենց որոշումը բեկանող վերադաս դատարանի որոշմանը:

Ըստ այդմ Դաշնային Սահմանադրական դատարանի որոշումները պարտադիր ուժ ունեն դաշնության և երկրամասերի սահմանադրական օրգանների, ինչպես նաև բոլոր դատարանների ու վարչական մարմինների համար: Այս դրույթի նշանակությունը նախ և առաջ կայանում է այն բանում, որ Դաշնային Սահմանադրական դատարանի որոշումների իրավական ուժը *անձնական տարածում ունի*, այսինքն՝ կաշկանդում է սահմանադրական օրգանների կողքին (ներառյալ այդ օրգանների այն մասերը, որոնք կարող են կողմ հանդիսանալ սահմանադրական դատավարությունում) բոլոր պետական մարմիններին, այսինքն՝ նաև բոլոր վարչական մարմիններին ու դատարաններին: Այն չի կաշկանդում ֆիզիկական անձանց և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց: *Այս անձնական տարածմամբ* այն տարբերվում է իրավական ուժից, որը, որպես կանոն, վերաբերում է միայն կողմերին:

Իսկ նորմկոնտրոլի գործերով որոշումները, բացի դրանից, պարտադիր ուժ ունեն *inter omnes*: Նորմկոնտրոլի գործերով որոշումների համընդհանուր պարտադիր բնույթը բխում է Դաշնային Սահմանադրական դատարանի մասին օրենքի §31 մաս II-ից:

Ինքը՝ Դաշնային Սահմանադրական դատարանը, կաշկանդված չէ իր սեփական որոշումներով, այլ կարող է շեղվել դրանցից: Սակայն մինչև այժմ միայն հազվադեպ է շեղվել: Երբեմն դատարանը մատնանշում է, որ շեղվում է իր նախորդ դատական պակտիկայից:

Այսպես, օրինակ, Դաշնային Սահմանադրական դատարանն ընգծված կերպով ուղղել է իր նախորդ որոշումները պետության կողմից կուսակցությունների ֆինանսավորման (BVerfGE 85, 264 ff.) և հարկադրման հետ կապված քրեաիրավական հանցակազմների վերաբերյալ (BVerfGE 92, 1, 15):

Ինչ վերաբերում է սահմանադրական դատարանի նորմերը վերացնող որոշումների իրավական ուժի և պարտադիր ներգործության մասին

պատկերացմանը, ապա այստեղ տարբերություն կա նաև Դաշնային Սահմանադրական դատարանի երկու սենատների միջև: Առաջին սենատն այն կարծիքին է, որ սահմանադրական դատարանի նորմերը վերացնող որոշումների պարտադիր ներգործությունը չի խոչընդոտում օրենսդրին նույն կամ նման բովանդակությամբ նոր կարգավորում ընդունելու: Հակառակ դրան Երկրորդ սենատը խոսում է իրավական նորմերն առոչինչ ճանաչելու դեպքում այսպես կոչված «նորմերի կրկնության արգելքի» մասին: Ընդ որում, Երկրորդ սենատը հենվում է մի հին որոշման վրա (BVerfGE 1, 14, 15). «Վճիռը, որով որևէ օրենք առոչինչ է ճանաչվում, ունի ոչ միայն օրենքի ուժ, ... այլև այն համաձայն սահմանադրական դատարանի մասին օրենքի §31 մաս I-ի որոշման, հիմնավորումով այնպես է կաշկանդում բոլոր սահմանադրական օրգաններին, որ չի կարող ընդունվել նույն բովանդակությունն ունեցող որևէ դաշնային օրենք»: Առաջին սենատն իր այն կարծիքը, որ նորմն առոչինչ ճանաչելուց հետո կարող է ընդունվել նույն կամ նման բովանդակությամբ նոր նորմ, հիմնավորում է այն բանով, որ օրենսդիրը կաշկանդված է միմիայն սահմանադրական կարգով, բայց ոչ սահմանադրական դատարանի նախորդ որոշումներով: Սովորական օրենքով սահմանված կաշկանդվածությունը սենատի կարծիքով չի արգելում օրենսդրին, նույն բովանդակությամբ նոր կարգավորում ընդունելով, իրագործել *կարգավորումներ սահմանելու իր ազատությունը և դրանց համար պատասխանատվություն կրել*: Այնուամենայնիվ, մինչև հիմա այս տարակարծությունը հազվադեպ է գործնական նշանակություն ունեցել, որովհետև Բունդեսբազն ու երկրամասերի պառլամենտներն առանց այն էլ հիմնականում հետևում են Դաշնային Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումներին:

բ) **Դաշնային Գերագույն դատարանի որոշումներն** իրավական պարտադիր ներգործություն չունեն նման գործերի վրա: Դա մասնավորապես բխում է Հիմնական օրենքի հոդվ. 97 մաս I-ից, ըստ որի դատարանները առարկայական անկախություն ունեն: Չնայած դրան՝ կարելի է համաձայնել Գերհարդ Լյուկեի հետ, որ վերոհիշյալ որոշումները փաստորեն ունեն նախադեպային ներգործություն գերմանական իրավունքում (Lüke, JuS 2000, 1042): Բանն այն է, որ եթե ստորին

ատյանները իրենց որոշումներով շեղվեն Դաշնային Գերագույն դատարանի դատական պրակտիկայից, վտանգ կա, որ նրանց որոշումները կբեկանվեն վերադաս ատյանների կողմից: Բեկանումը տեղի է ունենում որևէ առարկայական իրավական սխալի պատճառով: Եթե շեղման մեջ, բացի դրանից, նշմարվում է դատավորի կամայականության տարր, ապա խոսքը կարող է լինել նաև հավասարության սկզբունքի խախտման մասին: Այդքանով Դաշնային Գերագույն դատարանի որոշումները թեև պաշտոնապես չունեն արտադատավարական պարտադիր ներգործություն, սակայն ունեն որպես օրինակ ծառայելու ոչ պաշտոնական գործառույթ և կոնկրետ գործի սահմաններից դուրս եկող վերացական ուժ (Vgl. MüKo-Gottwald, Kommentar zur Zivilprozessordnung, 3. Auflage 2008, § 322 ZPO Rn. 23): Ասածը հատկապես վերաբերում է այսպես կոչված «մշտական դատական պրակտիկային»:

Եթե ռեվիզիան Դաշնային Գերագույն դատարանում հաջողությամբ է ավարտվում, և վերաքննիչ դատարանի վճիռը բեկանվում է (§562 ZPO), ապա այն սկզբունքորեն վերադարձվում է վերաքննիչ դատարանին ըստ ԲԴՕ §563 մաս I-ի: Այս դեպքում բեկանման հիմքում ընկած Դաշնային Գերագույն դատարանի իրավական գնահատականը պարտադիր ներգործություն է ձեռք բերում վերաքննիչ դատարանի համար, ընդ որում ծավալի մասին կարծիքները տարբեր են: Համեմատելիս դեպս այդ պարտադիր ներգործությունը վերաբերում է իրավական դիրքորոշմանը, իրավական նորմերի բովանդակության, գործողության և կիրառելիության մասին: (Thomas/Putzo-Reichold, Kommentar zur ZPO, 31. Auflage 2010, § 563 ZPO Rn. 4). Բացի դրանից՝ այդ պարտադիր ներգործությունը վերաբերում է նաև երկրամասային վերաքննիչ դատարանի այն իրավական գնահատականներին, որոնք արժանացել են Դաշնային Գերագույն դատարանի միանշանակ հավանությանը:

Մինչդեռ ըստ § 563 մաս 2-ի պարտադիր ներգործությունը վերաբերում է միայն այնպիսի պահանջներին կամ պահանջների այն մասերին, որոնք եղել են ռեվիզիայի արդյունքում կայացված որոշման առարկան: Այսպիսով, այն մասնավորապես չի վերաբերում նոր պահանջներին (Thomas/Putzo-Reichold, Kommentar zur ZPO, 31. Auflage 2010, § 563 ZPO Rn. 6): Ռեվիզիոն դատա-

րանի վճիռը պարտադիր ներգործություն չի ծավալում նաև հետագա դատավարություններին, անգամ եթե դրանք վարում են նույն կողմերը, և եթե դրանք վերաբերում են նույն իրավահարաբերությանը: Պարտադիր ներգործությունը կարող է ամբողջովին բացառվել այն դեպքերում, երբ վերաքննիչ դատարանը նոր հանգամանքներ է պարզում և երկրորդ վերաքննիչ բողոքի վերաբերյալ որոշման հիմքում դնում է այլ փաստական հանգամանքներ, քան ռեվիզիոն ատյանը: Բացի դրանից՝ պարտադիր ներգործությունը բացառվում է նաև այն դեպքերում, երբ իրավական իրադրությունը հետագայում փոխվում է կամ եթե կիրառման ենթակա օրենքն այդ ընթացքում Դաշնային Գերագույն դատարանի կողմից այնպիսի պարտադիր մեկնաբանություն է ստացել, որը շեղվում է ռեվիզիոն բողոքի վերաբերյալ առաջին որոշման առիթով արված մեկնաբանությունից: Այդպես է նաև, եթե ռեվիզիոն դատարանը հետագայում փոխում է բեկանման հիմքում ընկած իրավական դիրքորոշումը: Սակայն համաձայն ԲԴՕ § 563 մաս 2-ի պարտադիր ներգործության բացառման համար բավական չէ, որ վերաքննիչ դատարանը, որին որոշումը հետ է ուղարկվել, սահմանադրաիրավական կասկածներ ունենա ռեվիզիոն ատյանի վճիռի վերաբերյալ (BGH NJW 2007, 1127):

4. Կարևոր նշանակություն ունի նաև **եվրոպական** ասպեկտը: Ահա մի քանի կարճ նկատառումներ Լյուքսեմբուրգի Եվրոպական դատարանի ու Ստրասբուրգի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների մասին:

ա) Եվրոպական դատարան (ԵԴ)

Եվրոպական դատարանի նախնական որոշումների պարտադիր ներգործությունը հատուկ կարգավորում չի ստացել: Որոշումներն ստանում են ձևական ու նյութական իրավական ուժ և կաշկանդում ԵԴ-ին դիմող դատարանին, ինչպես նաև բոլոր ներպետական դատարաններին, որոնք զբաղվել են ելակետային վարույթով՝ մյուս ատյանները ներառյալ: Այս *inter partes* պարտադիր ներգործությունը չի բացառում, որ ազգային դատարանը կամ վերադաս ատյանները կարող են կրկին դիմել ԵԴ, եթե դա անհրաժեշտ են համարում: ԵԴ-ի նախնական որոշումներն սկզբունքորեն չունեն *erga omnes* պարտադիր ներգործություն: Դրա պատճառը ԵԴ-ի նախկին նախագահ Ռոբերտ Լեկուռի կարծիքով «դատավորների կառավարու-

թյան» վախեցնող ուրվականն է, որն ի հայտ է գալիս *erga omnes* պարտադիր ներգործության դեպքում:

Այնուամենայնիվ, ԵԳ-ի նախնական վճիռները կարող են ունենալ *erga omnes* պարտադիր ներգործություն, եթե դատարանն անվավեր է ճանաչում Եվրոպական համայնքի իրավունքը կամ նրա որևէ օրգանի գործողությունը: Այդ դեպքում անդամ պետությունների դատարանները, ինչպես նաև այլ մարմիններն ու Եվրոպական համայնքի օրգանները չպետք է այլևս կիրառեն համապատասխան դրույթները: Թույլատրվում է դիմել Եվրոպական դատարանին՝ նրա որոշումների գործողության սահմանները և դրանցից բխող հետևանքները պարզելու համար:

Դրան հակառակ ԵԳ-ի այն որոշումները, որոնցով ճանաչվում է Եվրոպական համայնքի իրավունքի վավերականությունը, արդեն ըստ իրենց եզրափակիչ մասի չունեն ընդհանուր պարտադիր ներգործություն: Այս դեպքերում ևս նոր, դեռևս չքննված տեսակետները կարող են պահանջել նոր գնահատում և արդարացնել կամ անհրաժեշտ դարձնել դատարանին կրկին դիմելը:

Եվրոպական համայնքի իրավունքը մեկնաբանող վճիռները ծավալում են սահմանափակ *erga omnes* ներգործություն: Ճիշտ է, անդամ պետությունների դատարանները պարտավոր են կիրառել Եվրամիության իրավունքը ԵԳ-ի մեկնաբանությանը համապատասխան: Այնուամենայնիվ վճիռի ներգործությունը չի արգելում հետագայում դիմել ԵԳ-ին՝ նույն հարցերը մեկնաբանելու խնդրանքով: Այն միմիայն արգելում է անդամ պետությունների դատարաններին ինքնակամորեն շեղվել նախնական որոշումից:

Նախնական վճիռներն սկզբունքորեն գործում են *ex tunc*: Սակայն ԵԳ իրավասու է սահմանափակելու իր վճիռների ներգործությունը անցյալի նկատմամբ: Բայց այդ ժամանակային սահմանափակումը պետք է հստակորեն բխի վճիռից:

բ) Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) որոշումների պարտադիր ներգործությունը անձնական առումով սահմանափակվում է վարույթի կողմերով: Ըստ Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 46-րդ հոդվածի միայն վարույթի մասնակից ան-

դամ պետությունն է պարտավոր դեկլարավել դատարանի վճռով: Մնացած անդամ պետությունների համար դատարանի որոշումը ծավալում է միմիայն կողմնորոշիչ ներգործություն: Հետևապես ՄԻԵԴ-ի վճիռները չունեն անմիջական միջազգային-իրավական պարտադիր ներգործություն ոչ անդամ պետությունների համար (Mausch, „Zur fallübergreifenden Bindungswirkung von Urteilen des EGMR“, *NvWZ* 2000, 1266, 1267.): Առարկայական տեսակետից իրավական ուժը սահմանափակվում է կոնկրետ գործի փաստական հանգամանքներով և դրա վերաբերյալ բողոքի բովանդակությամբ:

ՄԻԵԴ-ի իրավասությունը սահմանափակվում է Կոնվենցիայի խախտման ճանաչումով, ինչը բխում է 41-րդ հոդվածից (Frowein/Peukert-Frowein, *EMRK-Kommentar*, 3. Auflage 2009, Art. 46 Rn. 3): ՄԻԵԴ իրավասու չէ բեկանելու ազգային պետական ակտերը: Բայց ՄԻԵԴ-ի վճիռը, որով ճանաչվում է Կոնվենցիայի որևէ խախտում, պարտավորեցնում է համապատասխան պետությանը համաձայն 46-րդ հոդվածի վերացնել խախտումը և այնպես հատուցել դրանից բխող հետևանքները, որ խախտումից առաջ գոյություն ունեցած իրադրությունը հնարավոր չափով վերականգնվի: Իսկ թե պետական իշխանություններից որը պետք է կատարի որոշումը, կարգավորում է ներպետական իրավունքը: Այսպիսով, ՄԻԵԿ-ի 46-րդ հոդվածը ոչ թե տարբերակում է անում ըստ պետության գործառույթների, այլ հավասար չափով ընդգրկում է օրենսդրությունը, գործադիր և դատական իշխանությունները: Այնուամենայնիվ ՄԻԵԴ-ի դատական պրակտիկայի շուրջ քառասուն տարվա փորձը ցույց է տալիս, որ վճիռներն անդամ պետություններում երբեմն չեն կատարվում կամ կատարվում են ուշացումով: Դրա վերջին օրինակներն են ՄԻԵԴ-ի վճիռները քրեական պատժի ժամկետի լրանալուց հետո կանխիչ կալանքի վերաբերյալ, գերմանական դատարաններից շատերը մերժողական վերաբերմունք ունեն այդ վճիռների նկատմամբ, քննադատական վերաբերմունք է դրսևորել նաև Դաշնային Սահմանադրական դատարանը (Մինչ ՄԻԵԴ-ը քրեական պատժի ժամկետի լրանալուց հետո կանխիչ կալանքը դիտում է որպես [արգելված] հետադարձ ներգործություն ունեցող պատիժ, Դաշնային Սահմանադրական դատարանն իր 2004թ. վճռում ելնում է այն բանից, որ դա ոչ թե պատիժ է, այլ կանխիչ միջոցառում: Սպաս-

վում է, որ Դաշնային Սահմանադրական դատարանը եկող ամիսներին նոր որոշում կկայացնի այս վիճահարույց հարցի վերաբերյալ):

Անդամ պետությունների պարտավորությունը ենթադրում է նաև, որ իրենք կարող են ընտրել, թե ինչպես են իրագործելու ՄԻԵԳ-ի որոշումները: ՄԻԵԳ-ի վճիռների դեկլարացիոն բնույթից ելնելով՝ ընդհանրապես պատասխանող պետության գործն է, թե իր ներպետական իրավակարգի որ միջոցները կընտրի՝ Կոնվենցիայի խախտումները հնարավորինս արդյունավետ կերպով վերացնելու համար: Կոնվենցիայի խախտումներ ճանաչող վճիռների հիման վրա ներպետական վարույթները վերսկսելու պարտավորություն սկզբունքորեն գոյություն չունի: Այնուամենայնիվ, բազմաթիվ պետություններ, այդ թվում նաև Գերմանիան (vgl. § 580 Nr. 8 ZPO, § 359 Nr. 6 StPO), այդ դեպքի համար, երբ ՄԻԵԳ-ը իր վճռով Կոնվենցիայի որևէ խախտում է ճանաչում, իրենց դատավարական օրենսգրքերում հատուկ փաստական հանգամանքներ են նախատեսել վարույթի վերսկսման համար:

Օրենսդիրը պարտավոր է միայն այն դեպքերում իրագործել ՄԻԵԳ-ի որոշումները, երբ հնարավոր չէ տալ Կոնվենցիային համահունչ մեկնաբանություն: Կոնվենցիայի տեսանկյունից միևնույն է, թե ով կիրականացնի օրենքի փոփոխությունը կամ վերացումը՝ սահմանադրական դատարան⁶ը, թե՞ օրենսդիրը: Եթե ՄԻԵԳ-ի վճիռների կատարումը ստանձնում է Դաշնային Սահմանադրական դատարանը, որը Հիմնական օրենքի Պրեսամբուլայից, 1-ին հոդվածի 2-րդ մասից, 9-րդ հոդվածի 2-րդ մասից և 24-26-րդ հոդվածներից բխեցնում է միջազգային իրավունքին համահունչ մեկնաբանման պարտավորություն, ապա այն հաճախ չի տալիս սեփական հիմնավորում: Այդ դեպքերում Դաշնային Սահմանադրական դատարանը ՄԻԵԳ-ի վճիռների պարտադիր ներգործությունն այնքան ակնհայտ է համարում, որ երբեմն միայն հղում է անում այդ վճիռներին կամ վճռի հիմնավորման հատվածներն օգտագործում է՝ դրանցով իր սեփական հիմնավորումը փոխարինելու համար:

Մի այլ մակարդակում է գտնվում այն, որ ՄԻԵԳ-ը կարող է որոշել, որ պատասխանող և ՄԻԵԳ-ում «պարտված» պետությունը պիտի սահմանված ֆինանսական հատուցում տա այն կողմին, որը մարդու իրավունքների խախտման գոր-

ծով հաղթող է դուրս եկել:

5. Այս իրավական իրավիճակին են համապատասխանում էական մայրցամաքային իրավակարգերը ԵՄ ներսում: Որպես օրինակ նշեմ միայն մի քանի պետություններ իրենց կարգավորումներով:

ա) *Ֆրանսիան, Իսպանիան և Իտալիան* կարգավորումներ ունեն իրենց սահմանադրություններում, իրենց մեծ կողիֆիկացիաներում ու իրենց դատավարական օրենսգրքերում: *Իսպանիայում* իրավունքի աղբյուր են համարվում օրենքը, բարքերը և ընդհանուր իրավական սկզբունքները („Las fuentes del ordenamiento jurídico español son la Ley, la costumbre y los principios generales del derecho“, Código civil հոդվ. 1 մաս I): Հաստատված դատական պրակտիկան դասվում է այս սկզբունքների թվին, այնպես որ, եթե որևէ դատարան այն հաշվի չառնի, դա կարող է վճռաբեկության (ռեվիզիայի) հիմք հանդիսանալ: Չնայած դրան՝ հիմնավորումը տալիս է շեղվելու հնարավորություն (տես օր. Albaladejo, Derecho Civil I [2009] է. 134): *Իտալիայում* իրավունքի աղբյուր են համարվում օր. ըստ ԶՕ 1-ին հոդվածի օրենքները, որոշումները, կանոնադրությունները, սովորույթները: Ինչ վերաբերում է գերագույն դատարանների որոշումների պարտադիր ներգործությանը, ապա այստեղ սկզբունքորեն խոսքը **մեկնաբանման** մասին է: Այսպիսով, գոյություն ունեցող իրավական պրակտիկան պետք է հաշվի առնվի վճռված գործի շրջանակից դուրս: Հատուկ նշանակություն ունեն վճռաբեկ դատարանի միացյալ սենատների պլենար որոշումները, որոնք առանձնահատուկ դեր են խաղում 2006-ին իրականացված ռեֆորմի արդյունքում: Համապատասխան կարգավորումը գտնվում է Իտալիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդվ. 374-ում: Վճռաբեկ դատարանը (Corte Suprema di Cassazione) ի թիվս այլ խնդիրների պարտավոր է ուշադրություն դարձնել դատական պրակտիկայի միասնականությանը: Այդ գործառույթն ունեն նախ և առաջ միացյալ սենատների որոշումները. միացյալ սենատներին են ուղարկվում դատարանի նախագահի կարգադրությամբ որոշումները, եթե առկա են ոչ միասնական դատական պրակտիկայի արդյունքներ և եթե այդ որոշումները վերաբերում են հատուկ նշանակություն ունեցող սկզբունքային հարցերի (Eccher, Handbuch des italienischen Zivilrechts, 2009, S. 46):

Սենատներն առանձին-առանձին՝ հասարակ սենատները (Sezioni Semplici), իրավունք չունեն հակառակվելու միացյալ սենատների (Sezioni Unite) դիրքորոշմանը, այնպես որ այդ գերագույն ատյանի որոշումները պարտադիր են հասարակ սենատների համար (Viola, Il vincolo delle Sezioni unite nel D. LVO 40/2006: Ombre e Luci, S. 1): Պարտադիր ներգործության հետ գործ ունենք մաս այն դեպքերում, երբ վճռաբեկ դատարանը գործը հետ է ուղարկում iudex a quo-ին քաղաքացիական կամ քրեական դատավարությունում: Այնուամենայնիվ գործնականում ստորադաս ատյանների դատարանները մեծ մասամբ հետևում են վճռաբեկ դատարանի որոշումներին, այնպես որ առաջանում է մշտական դատական պրակտիկա մաս, եթե օրենքը հստակորեն չի սահմանում պարտադիր ներգործություն:

Իրադրությունը նման է **Ֆրանսիայում**: Գիտնականները, վկայակոչելով իշխանությունների տարանջատման սկզբունքը, գերրազանցապես այն կարծիքին են, որ դատական պրակտիկան իրավունքի աղբյուր չի հանդիսանում (Hübner/Constantinesco, Einführung in das französische Recht, 4. Aufl. 2001, S. 10): Նրանց ասելով, մի կողմից դատավորը կիրառում է արդեն գոյություն ունեցող դրույթ (օրենք կամ բարք), այնպես որ նորը չի ստեղծվում: Դատավորի խնդիրն է մեկնաբանել նորմը և հարմարեցնել կոնկրետ գործը ընդհանուր դրույթի ներսում: Իրավական ուժը (res judicata) լուծված գործին չի շնորհում ավելի հեռուն տանող նշանակություն: Res judicata-ն պարտադիր ներգործություն չունի երրորդ անձանց համար (Larroumet, Droit civil: Introduction à l'étude du droit privé, 4. Aufl. 2004, S. 164): Res judicata-ն պարտադիր ներգործություն չի ծավալում արդարադատության նույն ճյուղի դատարաններում ապագայում քննվող գործերի նկատմամբ: Այնուամենայնիվ դատարանների որոշումների նշանակությունն անկասկած ճանաչված է, այնպես որ ֆրանսիական գերագույն դատարանների գործունեությունը կարևոր դեր է խաղում իրավունքի միասնական կիրառման հարցում: Ճիշտ է, դատավորը տարբեր ատյաններում գործի քննությունից դուրս կաշկանդված չէ վերադաս ատյանների որոշումներով, բայց այն դրույթը, որով նա ղեկավարվում է, չի կարող առանձին դիտվել, այն պետք է դիտվի գերագույն դատարանի կողմից տրված մեկնաբանու-

թյան համատեքստում: Տարբեր ատյաններում գործի քննության ընթացքում պարտադիր ներգործությունը գոյություն ունի օրենքի ուժով գործը երկրորդ անգամ հետ ուղարկելու դեպքում. դրանից դուրս գործում է գերագույն դատարանների դիրքորոշման «համոզման» ուժը. դիրքորոշում, որին ստորադաս դատարաններն սկզբունքորեն հետևում են, բացի այն դեպքերից, երբ գիտակցաբար ցանկանում են շեղվել դրանից, դատական պրակտիկայում փոփոխություն առաջացնելու համար:

բ) Շատ նման է իրադրությունը Հունաստանում՝ Հայաստանին թերևս ամենից մոտ գտնվող ԵՄ անդամ պետությունում: Հունական սահմանադրության հոդվ. 87 կարգավորում է Արեոպագի (գերագույն դատարան) կառուցվածքն ու դատական պրակտիկայի միասնակության վերահսկողության գործառույթը: Սակայն այստեղ էլ նրա որոշումների պարտադիր ներգործությունն օրենքի ուժով սահմանափակված է գործի քննությամբ տարբեր ատյաններում: Բայց պարտադիր ներգործություն համոզմունքի ուժով կա այստեղ էլ: Դրա դրոշմն է կրում դատական պրակտիկան: Դատական պրակտիկան Հունաստանում իրավունքի ամսիջական աղբյուր չի հանդիսանում, բայց կարող է դիտվել որպես իրավունքի անուղղակի աղբյուր: Յուրաքանչյուր դատավոր կարող է իրավական վեճին ազատորեն տալ իր իրավական լուծումը, անգամ եթե մեկ այլ (վերադաս) դատարան նման գործով այլ իրավական լուծում է տվել: Այսօր գործնականում վերին ատյանների դատարանների որոշումները հաշվի են առնվում, թեև այդ որոշումները չեն կաշկանդում ստորին ատյանների դատարաններին տարբեր ատյաններում կոնկրետ գործի քննությունից դուրս. որպես կանոն՝ նրանք չեն շեղվում վերադաս դատարանների դիրքորոշումից, բացի այն դեպքերից, երբ նոր մոտեցումներ են առաջանում: Մշտական դատական պրակտիկան ապահովում է արդարադատության միասնականությունը, պայմանագրերի կայունությունը և հայցվորի իրավունքների պաշտպանությունը:

6. Իհարկե այլ է իրադրությունը Մեծ Բրիտանիայում, որն այդպես էլ չունեցավ կողիֆիկացիոն համակարգ. այդ նույն պատճառով այստեղ կարող էինք խոսել նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների մասին: Սակայն առնվազն ժամանակը խնայելու համար ես կմնամ Եվրոպական Միություն-

նում, իսկ Միացյալ Թագավորությունում կասահմանափակվեմ **Անգլիայով**:

ա) Անգլիայի Case Law-ն հիմնված է նախադեպերի համակարգի վրա, որը ելնում է այն բանից, որ որևէ նոր որոշում սկզբունքորեն և պարտադիր կերպով պետք է կողմնորոշվի որևէ նախորդ որոշմամբ: Քաղաքացիական դատարանների պարագայում այս կախվածությունը հետևում է doctrine of stare decisis դոկտրինից: Ըստ այդ դոկտրինի պետք է կառչել արդեն որոշվածից (stare decisis = պահպանել որոշումները): Stare decisis (et non quieta movere) դոկտրինի կենտրոնական դրույթն այն է, որ վերադաս դատարանների որոշումները պարտադիր են ստորադասների համար (ուղղահայաց պարտադիր ներգործություն): Իսկ երբ դատարանն ինքն իրեն կաշկանդում է սեփական նախկին որոշումներով, ապա այդ դեպքում խոսում են հորիզոնական պարտադիր ներգործության մասին: Պարտադիր ներգործությունը ծավալում է ratio decidendi (որոշելու հիմք): Պարտադիր ներգործություն ունեն միայն նախադեպի վերաբերյալ որոշման էական հիմքերը (ratio decidendi): ratio decidendi չի համապատասխանում մայրցամաքային բնույթի օրենքի նման համընդհանուր իրավական դրույթի, այլ պահպանում է իր կոնկրետ գործի վրա հիմնված ուղղվածությունը, քանի որ պարտադիր ներգործությունը տարածվում է բացառապես նման գործերի վրա („like cases must be treated alike“): Այն կարելի է նկարագրել իբրև դատավորի կողմից որոշում կայացնելու կանոն, որը բխում է հիմնավորումից և հիմնված է որոշման կայացման համար էական նշանակություն ունեցող փաստերի վրա: Այնուամենայնիվ, բնավ էլ չկա միասնական կարծիք այն մասին, թե ինչումն է կայանում ratio decidendi-ն: Վճռի այն մասերը, որոնք չեն պարունակում որոշման կայացման համար էական հիմքեր, անվանվում են obiter dicta (things said by the way): Obiter dicta-ն որոշումների նախադեպային ներգործության մաս չեն կազմում, թեև դատավորները հաջորդ գործերը քննելիս կարող են կրել նման obiter dicta-ների ազդեցությունը: Ընդ որում խոսքն այսպես կոչված persuasive precedents` համոզիչ նախադեպերի մասին է: Գատարանը պարտավոր չէ դրանք հաշվի առնել binding precedents` պարտադիր նախադեպերի նման, դատարանը դրանք իր հայեցողությամբ է հաշվի առնում կամ ոչ:

բ) Գործում է այն սկզբունքը, որ որևէ դա-

տարանի կողմից որևէ գործով որոշում կայացնելիս կիրառված իրավական փաստարկը պարտադիր կերպով պետք է հաշվի առնվի հետագայում քննվող գործի պարագայում, եթե փաստական հանգամանքները բավարար չափով համեմատելի են: Անգլիական նախադեպային համակարգի համար անհրաժեշտ է, որ գոյություն ունենան իրավունքը զեկուցելու համակարգ (system of law reporting) և դատարանների աստիճանակարգ` հիերարխիա (hierarchy of courts): Պարտադիր ներգործությունն իհարկե բացարձակ չէ, այն բաղկացած է շատ դիֆերենցված համակարգից: Որոշակի պատճառներով նախադեպային որոշումների կիրառումը կարելի է շրջանցել: Եթե վերադաս դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանի որոշումը սխալ է, ապա կարող է վերացնել այն (overruling): Գատարանները պարտավոր չեն հետևել որևէ որոշման, եթե բոլոր գործերի ratio decidendi-ն համեմատելի չէ (distinguishing) քննվող գործի փաստական հանգամանքների հետ (Slapper/Kelly, The English Legal System, 10th ed. 2009-2010, 125).

Պարտադիր ներգործության գործնական նշանակությունը և սահմանները կարճ կարելի է նկարագրել հետևյալ կերպով: **Լորդերի պալատի** որոշումները պարտադիր էին բոլոր մյուս դատարանների, այդ թվում նաև Court of Appeal-ի` վերաքննիչ դատարանի համար: Լորդերի պալատի համար նախադեպային պարտադիր ներգործություն ունեին միայն Եվրոպական դատարանի որոշումները: Ինչ վերաբերում է հենց Լորդերի պալատի կողմից նախկինում ընդունված որոշումներին, ապա սկզբում գործում էր այն սկզբունքը, որ Լորդերի պալատն իրեն սկզբունքորեն կաշկանդված էր համարում հին որոշումներով: Սակայն, սկսած 1966 թվականից, Լորդերի պալատն անհրաժեշտության դեպքում շեղվում էր այդ սկզբունքից (Այսպես օրինակ Practice Statement-ում (Judicial Precedent) 1996 W.L.R. 1234 և Kleinwort Benson Ltd. v. Lincoln City Council and Others Appeals գործով որոշումում (1998) 4 All E.R. 513 H.L., որտեղ տրված է նաև հիմնավորում այն մասին, թե երբ է ողջամիտ շեղվելը նախկին ղեկավար որոշումից: Մինչև 1966 թ. Լորդերի պալատը շատ խիստ էր կիրառում այդ դոկտրինը: Այսպես կոչված Practice Statement-ից հետո նախնական որոշումների ներգործության պարտադիրությունը նվազել էր, քանի

որ Լորդերի պալատն այլևս չէր համարում, որ պարտադիր պետք է հետևի իր սեփական նախկին որոշումներին:

2009-ին **Գերագույն դատարանը՝ Supreme Court**, փոխարինեց Լորդերի պալատին իբրև Միացյալ Թագավորության բարձրագույն դատարան: Այս ռեֆորմը բխում էր 2005-ի Constitutional Reform Act-ից: Ռեֆորմի նպատակն էր ուժեղացնել դատական իշխանության անկախությունը օրենսդիր և գործադիր իշխանություններից: Նախադեպային որոշումների պարտադիր ներգործության սկզբունքները, որոնք գործում էին Լորդերի պալատի համար, պահպանվում են մաս Գերագույն դատարանի համար: Նոր դատարանը ևս միայն սահմանափակ իրավասություն ունի, դժվար հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու, զարգացնելու իրավունքը: Նվազ պարտադիր ներգործություն ունեն վերաքննիչ դատարանի՝ **Court of Appeal** և Պառլամենտի բարձր դատարանի՝ **High Court** որոշումները իրենց ստորադաս դատարանների համար:

III. Ամփոփիչ դիտարկում

1. Ներկայացված ուսումնասիրության մեջ ակնարկը ԵՄ-ի համար ներկայացուցչական իրավակարգերի մասին առնվազն երկու բան է ցույց տալիս. **պարտադիր ներգործություն** գերագույն դատարանների որոշումներն ունեն, եթե հանդես են գալիս որպես վճռաբեկ կամ ռեվիզիոն դատարան տարբեր ատյաններում կոնկրետ իրավական գործի քննության ժամանակ: Պետք է ընդունվի իրավական առումով ճիշտ որոշում: Դրա համար անհրաժեշտ է մաս պահպանել **դատական պրակտիկայի միասնականությունը**, համապատասխան վերահսկողությունը գերագույն դատարանների կարևորագույն խնդիրներից է: Այս **հիմնարար կանոնը կա ամբողջ Եվրոպական Միությունում**. մաս նրա սահմաններից դուրս, ինչպես ցույց է տալիս **Ռուսաստանի** օրինակը, Ռուսաստանի սահմանադրության **հոդվ. 106-ում** և այդ երկրի Զադաբա-ցիական դատավարության օրենսգրքի հոդվ. 369 ու հոդվ. 390 կետ 6.1.1 ու 2-ում սահմանված է այդ պարտադիր ներգործությունը տարբեր ատյաններում գործի քննության ժամանակ: Այդպիսի պարտադիր ներգործությունը ճիշտ է և սկզբունքորեն անպայման անհրաժեշտ: Թե ինչպես է դա արվում գործնականում, ես ներկայացրեցի:

Բայց բացարձակ պարտադիր ներգործու-

թյուն չկա: Կարող են փոփոխվել քննվող գործի փաստական հանգամանքները. առհասարակ ստորին ատյանների դատարանները, ելնելով իրենց տարբերակման հմտությունից, առավել կամ պակաս կախվածության մեջ են հայտնվում վերադաս դատարանների որոշումներից: Պարտադիր ներգործությունն սկզբունքորեն գոյություն ունի միայն նյութաիրավական կողմի համար, բայց այստեղ էլ այն վերաբերում է միայն որոշման կայացման համար էական կետին և չի վերաբերում obiter dicta-ին, որը այս կամ այն ծավալով կարող է տեղ գտած լինել վերադաս դատարանի որոշման մեջ: Ընդ որում ԵՄ պետություններն ունեն տարբեր ավանդույթներ. լայնածավալ obiter dicta-ների հաճախ հանդիպում ենք անգլիական որոշումներում, որոնք իրենց սեփական ռճն ունեն, և հազվադեպ՝ ֆրանսիական դատարանների կուռ ձևակերպումներ ունեցող որոշումներում:

2. Երկրորդ ասպեկտը կաշկանդվածությունն է **մշտական դատական պրակտիկայով**: Այստեղ էլ կան ընդհանրություններ ամբողջ ԵՄ-ում, ներառյալ Անգլիան և ամբողջ Միացյալ Թագավորությունը, թեև վերջիններում այլ ավանդույթ է իշխում: **Նախադեպային համակարգում** նախադեպն իր ազդեցությունը ծավալում է կոնկրետ գործի սահմաններից դուրս, բայց փորձառու օգտվողներին համակարգը կոնկրետ գործի առանձնահատկությունների ընդգծման միջոցով ընձեռում է տարբերակման և շեղման բազմապիսի հնարավորություններ:

ԵՄ մայրցամաքային հատվածում պարտադիր ներգործությունն **օրենքով** չի դրված դատավորի վրա, այլ նա ինքն է այն ստանձնում, ինչը հնարավոր ու ճիշտ է սահմանադրության լույսի ներքո և երաշխավորում է միասնական իրավական պրակտիկա ու իրավական անվտանգություն, սակայն բացարձակ բնույթ չունի:

Մեզ մոտ առկա է հետևյալ իրադրությունը. ելակետը կաշկանդվածությունն է օրենքով և իրավունքով: Օրենքով կաշկանդվածությունը բոլոր ատյանների անկախությամբ օժտված դատավորների համար նշանակում է, որ նրանք կաշկանդված չեն գործադիր իշխանության դիրեկտիվներով, որոնք չունեն իրավական նորմի որակ: Դատավորները նույն չափով կաշկանդված չեն մաս առաջ կոչված «մշտական դատական պրակտիկայով», որը գերագույն դատարանների, Գերմանիայում

www.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մասնավորապես դաշնության գերագույն դատարանների և երկրամասերի գերագույն դատարանների կողմից օրենքի մեկնաբանման արդյունք է: Եթե դատավորը գիտակցաբար քամահրում է այդ մշտական դատական պրակտիկան, առանց դրա համար հիմքեր ունենալու, ապա նրա որոշումը հնարավոր է բեկանել վերադաս ատյաններում. դրանով նա ոչ մի լավ բան չի անում ոչ իրավակարգի, ոչ կողմերի և ոչ էլ հենց իր համար: Սակայն կոնկրետ գործով որոշում կայացնելիս, ինչը միայն ինքը կարող է անել որպես «օրենքով դատավոր», նա կարող է և շեղվել այդ մշտական դատական պրակտիկայից, եթե դրա համար հիմքեր է տեսնում: Դա այդպես է միայն այն դեպքերում, երբ «մշտական դատական պրակտիկան» հիմնված է նորմավորված իրավունքի որոշակի մեկնաբանության վրա, որն ինքը չի կարող կիսել իր կոնկրետ գործի առնչությամբ. այդպես կարող են խթաններ առաջանալ մշտական դատական պրակտիկան վերստուգելու կամ նաև վերանայելու համար, որոնց հետևանքում տեղի է ունենում իրավունքի զարգացում օրենսդրական ակտերի վրա հիմնված իրավունքի շրջանակում և կենդանի հասարակությունում, որում իրավունքը չի կարող լինել միայն ստատիկ մեծություն: Այդ անկախությունը և «մշտական դատական պրակտիկան» հարցականի տակ դնելու իրավասությունը դեր են խաղում նաև այնտեղ, որտեղ օրենսդրական ակտերի վրա հիմնված իրավունքում եղած «բացերը» լրացվել են դատավորների, հատկապես գերագույն դատարանների դատավորների իրավաստեղծ գործունեության շնորհիվ: Այդպիսի «դատավարական իրավունքը» կարող է դառնալ սովորության իրավունք, եթե բավականին երկար ժամանակ և բավականին ինտենսիվ իրականացվել է առանց այլ դատարանների կամ իրավագետների առարկության. այնուամենայնիվ, այստեղ էլ մեկ այլ գործ քննող դատավորի համար չի առաջանում այնպիսի պարտադիր ներգործություն, որն ունի օրենքը: Վերջինս կարող է «իր» գործի քննության ընթացքում շեղվել, այլ որոշում կայացնել և այդպես էլ կանի, եթե տեսնի դրա անհրաժեշտությունը:

Այնուամենայնիվ, պրակտիկան ցույց է տալիս, որ այդպիսի շեղումը բացառություն է կազմում: Սկզբունքորեն «մշտական դատական պրակտիկան» հաշվի է առնվում և դրվում հետագա որոշումների հիմքում, ընդ որում պատճառները պարզ

են. «մշտական դատական պրակտիկան, անխելամիտ ձևով չի կազմավորվում, այն իրենից ներկայացնում է լուծումների վերաբերյալ այնպիսի տեսակետ, որը համապատասխանում է իրավական պրակտիկային և գերիշխող իրավագիտակցությանը: Այդ դեպքում իրավական անվտանգությունն է պահանջում այն հաշվի առնել նաև ապագայում. դա նշանակում է իմանալ այն և նաև հիշատակել որոշման մեջ: Ինքնըստիներյան դա այդպես է հատկապես այն դեպքերում, երբ դատավորը ցանկանում է օգտվել շեղվելու իր իրավասությունից: Որոշումը թափանցիկ ձևակերպելու պահանջը հանգեցնում է հիմնավորման պարտականությանը և այնտեղ, որտեղ դա թույլատրում է դատավարական իրավունքը, նաև տարբեր ատյաններում շեղվող որոշման վերաքննության թույլատրությանը (ստորին դատարանից դեպ վերին): Այսպես խթաններ են առաջանում «մշտական դատական պրակտիկայի» վերանայման, ինչպես և զարգացման կամ հաստատման համար: Այս ազատությունը և անկախությունը նաև հիմք են կազմում այն բանի համար, որ վերադաս դատարանները, որոնք ձևակերպում են «մշտական դատական պրակտիկան» ու, իրենց որոշումները հրատարակելով, օժտում դրան արտաքին ներգործությամբ, ի վիճակի լինեն այն փոփոխելու կամ նույնիսկ դրանից հրաժարվելու: Պրակտիկան Գերմանիայում, ինչպես և այլ երկրներում, որոնց մասին խոսել եմ, տարբեր օրինակներով անընդհատ ցույց է տալիս, որ մինչև հիմա եղած դատական պրակտիկայի գիծը փոխվել, ձևափոխվել կամ մերժվել է: Կա նաև այն պրակտիկան, երբ հայտարարվում է, որ մինչև այժմ տարված գիծը հետագա գործերում չի շարունակվելու, և որ որոշումներն այլ եղանակով են կայացվելու: Այստեղ հստակորեն ի հայտ է գալիս վստահության պաշտպանության ասպեկտը, որը չափազանց կարևոր մասնակի ասպեկտ է հանդիսանում իրավական անվտանգության, որը պիտի երաշխավորի դատական պրակտիկան: Այսպիսով որպես սկզբունքային արդյունք պետք է դիտվի այն, որ դատավորների կողմից արդարադատության իրականացումը պիտի բխի կաշկանդվածությունից իրավունքով և օրենքով: Ակնհայտ է նաև, որ ԵՄ նման «իրավական շուկայում», որի կազմում կան ավելի քան 80 միլիոն բնակիչ ունեցող պետություններ (օր. Գերմանիան), արդարադատության իրականացումը չի կարող հրաժարվել նախադեպից,

www.lawinstitute.am

կազուխատիկայից և «մշտական դատական պրակտիկայից», որն արտացոլում է իրավունքը և օրենքը իրավական պրակտիկայում: Այն երաշխավորում է համաչափություն, իրավական անվտանգություն և նորմի նկատմամբ պարզեցված մոտեցում և այդ իսկ պատճառով նաև ինքնանպատակ չէ: Հենց այդ պատճառով էլ դրանից չի բխում այնպիսի պարտադիր ներգործություն ապագայի համար, ինչպիսին հատուկ է օրենքին: Նախադեպը պետք է անընդհատ համոզի նորից ու նորից, այն «օրենք» չէ: Մայրցամաքային համակարգում օրենքով դրան այդպիսի աստիճան շնորհելը ճիշտ չէր լինի:

IV. Ամփոփում

Եթե ամփոփելիս լինեմ, ապա պետք է ընդգծեմ հետևյալ հիմնական կանոնները.

- սահմանադրական դատարանի՝ այն որոշումներով կաշկանդված լինելը, որոնք պարտադիր լինելու իրավունք ունեն, մենք դիտում ենք լեգիտիմ դրանց սկզբունքային ազդեցության պատճառով, որով դրանք նմանվում են օրենքներին,

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Ստրասբուրգ) որոշումները վճռված գործով պարտադիր են ստրասբուրգյան վարույթում որպես կողմ հանդես եկած պետությանը: Ստրասբուրգյան

դատարանի որևէ որոշման ավելի հեռուն գնացող պարտադիր ներգործությանը պետք է մոտենալ խիստ դիֆերենցացված կերպով,

- Եվրոպական դատարանի (Ստրասբուրգ) որոշումները կարող են համաձայն Եվրոպական համայնքի իրավունքի՝ պարտադիր ներգործություն ունենալ, մասնավորապես խոսքը եվրոպական իրավունքի մեկնաբանմանը վերաբերող «նախնական որոշումների» մասին է: Սակայն սա (վերագրային) եվրոպական իրավունքի հատուկ դաշտն է,

- ԵՄ պետությունների իրավական իրադրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գերագույն դատարանների «մշտական դատական պրակտիկայի» պարտադիր ներգործությունն օրենքով կարգավորված չէ: Այդ ներգործությունը կա, դրա կարգավորված չլինելը թերություն չէ, այլ իրավունքի զարգացման նախադրյալ, քանի որ այդ զարգացումը տեղի է ունենում տարբեր ատյաններում տեղի ունեցող վարույթների և նաև համեմատելի առարկաներին վերաբերող հետագա վարույթների ընթացքում դատարանների փոխադարձ շփումների շնորհիվ: